



Տ Ե Ս Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԱՅՐԱՎՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԸՆՏԻ ՀԱՅՐԱՊԵՏ ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՏ

Մայրաքաղաքից էջմիածին եւ գնացել Ամենայն Հայոց Հայրապետին՝ Նորին Ս. Օժուրյուն Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառ Կաթողիկոսին տեսնելու նպատակով: Վեհաբանի սանդուղներից վեր եւմ բարձրանում խորունկ պատկանաճով: Եվ որչա՛փ մոտենում եւմ արտաքին մեծ դռան, այնչա՛փ առավել սիրտս լցվում է անխառն հրեմանքով, որովհետեւ շուտով իրականացվելու է իմ հոգու փափագներից մեկն էլ, այն է՝ տեսնել Ամենայն Հայոց ազգընտիր Կաթողիկոսին և Մայրագույն Պատրիարքին, համբուրել Ս. Աջը հայրենասեր ու ժողովրդասեր Հայրապետին և ապրել, քեկուզ մի քանի րոպե, ամենքից սիրված ու հարգված Կրոնապետի և Ազգապետի կենարար ու կենդանարար խոսքերից բխած գերիվեր հմայքի ու վսեմ շնչի ազդեցության տակ: Խմայք և շունչ, որոնցով ներշնչվել եմ և միշտ պիտի ներշնչվեմ Սփյուռքի հայ հավատացյալ ժողովրդի սիրտն ու հոգին:

Ինձ ի՞նչ փույր, քե՛ն ձյունը, հունվարի այս առավոտ, անդուլ իջնում է փաթիլ-փաթիլ և իր սպիտակ սավանի տակ ծածկում շենքերի տանիքներն ու ասֆալտապատ կողոտաները, զրոսագիներն ու հրապարակները: Ես կանգնել եմ հիմա մի ուխտավայրի դռան առաջ: Ներսը, ո՞վ գիտի, և՛ խոկում է, և՛ աղորում մեր Վեհափառը: Եվ սակայն, նա հայր է գործավար, նա, անգամ խոկման ու աղորքի պահին, չի մերժի հարազատներից մեկին ընդունել իր օրհնածիր ներկայությամբ:

Մտնում եմ նախասենյակից ներս և առաջնորդվում դեպի այն դահլիճը, ուր տեղի է ունենալու մեր տեսակցությունը:

Վեհաբանի պատմական այս դահլիճը, սակայն, լիովին լցվել է նի խորհրդավորությամբ, որը բխում է Վեհափառ Հայրապետի բարձր ու վեհ կոչումից և հավերժ օրհնյալ անձից: Եվ ես ակնածանքով մոտենում եմ Նորին Ս. Օժուրյան, ափիս մեջ լսնում Ս. Աջը, համբուրում, ապա տեղ եմ գրավում հրաշակողմամբ:

Վեհափառը հետաքրքրվում է իմանալ Հայաստանում իմ կրած տպավորությունների մասին: Ես պատասխանում եմ, քե՛ն շա՛տ, անսահմանորեն խանդավառ եմ իմ տպավորությունները և իմ երախտագիտությունն եմ հայտնում մեր կառավարության, որ ո՛չ միայն ինձ արտոնեց արտասահմանից Հայրենիք դառնալ և վերամիանալ նախապես հայրենադարձ իմ հարազատներին,

այլև պարզեց, որպես լիիրավ ֆաղափացի, Սովետական մեծ Հայրենիքի բարիքները վայելելու գերեզմանությունը:

Նա հետաքրքրվում է և իմ տարիքով, և երբ իմանում է 60-ի մոտ լինելս, ժպտալով հարցում է տալիս, քե ինչո՞ւ ուրեմն այնքան շուտ եմ սպիտակել իմ մազերը: Ես պատասխանում եմ, որ արտասահմանում, աստուրի, տարագրությունների, բանտարկությունների, զանազան տառապանքների ու գրկանքների հետևանքով, ուրիշ հայերի նման, իմ կյանքն էլ անցել է բազմապիսի դառնությունների միջից:

Հեռավոր, անհարազատ երկրներում, երկար տարիների քափառումից հետո իր հայրենի տունը վերադարձած պանդուխտ որդու և սիրակառոտ հարազատ հայրիկի միջև մտերիմ, սրտաբաց, գլուխ-գլխի տեսակցությունն էր այս, առանց սեքսեթի, առանց ձևականության:

Չգիտեմ եմ, սակայն, որ ես իրավունք չունեմ խլելու ծերունագարդ Հայրապետի բանկազին վայրկյանները: Ուստի, մտերմությունից անցնելով պաշտոնականության, ասում եմ.

— Վեհափառ Հա՛յր, անհունորեն երախտապարտ եմ, որ Ձերդ Վեհափառությունը (բարեհաճեց ինձ շնորհել այս ունկնդրությունը: Զանադիր պիտի լինեմ չարաչար չգործածելու այս բացառիկ շնորհը և թգովելով Ձերդ Վեհափառության հայրական ներողամտությունից, պիտի համարձակվեմ մի փանի հարցում անել, իհարկե, Ձերդ Վեհափառության բարձր հրամանով:

Վեհափառը ժպտում է հայրաբար: Վառում է էլեկտրական լամպը, նրստում է սեղանի առաջ, որի թափալ ծածկոցի վրա ասեղնաճյուղաված նկարում երևում է Հիսուսն իր աշակերտների հետ Վերջին ընթրիքը կատարելիս: Տեղ եմ գտնվում Վեհի դիմացը:

ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑՈՒՄ.— Համաշխարհային խաղաղությունը, որը բխում է Բրիտանեական վարդապետության սկզբունքներից և ի միջի այլոց աշխարհի բոլոր ժողովուրդների և հայ ժողովրդի շահերից, միշտ էլ եղել է Ձերդ Վեհափառության իդեալ ցանկություններից մեկը: Ձերդ Վեհափառությունը թշմիայն չի գոհացել աղոթելով, այլև անդադրում, բանիլ և գործով պայքարել է հոգուտ համաշխարհային խաղաղության ամրապնդման: Այդ ծանոթ է բոլորին:

1953 թվականի ամառնրի կապակցությամբ, որպես ամենամին Բրիտանյա եկեղեցու՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ազգրեմի Գերագույն Հովվապետի, Մայրաճույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ազգապետի, ի՞նչ են Ձերդ Վեհափառության բարեմաղրությունները աշխարհի խաղաղության համար:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Իմ մտքում, համաշխարհային խաղաղության համար բարեմաղրությունները բանաձևվում են ոչ միայն ամառնրի կապակցությամբ, այլև մանավանդ Փրկչի՝ Հիսուս մանկան ծննդյան կապակցությամբ, որովհետև խաղաղությունը, ինքնին, Բրիտանեական գաղափար է: Այդ մասին կա Փրկչի հստակ խոսքը. «Խաղաղությունն քողում ձեզ, զխաղաղություն զիմ ետմ ձեզ. ոչ որպես աշխարհս տայ, տամ ես ձեզ»:

Բրիտանեական խաղաղության հիմքը սերն է, եղբայրությունն է:

Փրկիչը, «Զխաղաղութիւն զիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ» ասելով, հակադրում է խաղաղության գաղափարը բռնության խաղափարին և նրանով փորձում է զսպել մարդկային անհագ պահանջները:

Հիսուս տալիս է իր խաղաղությունը, սիրո և եղբայրության վրա հիմնված
 ֆրիստոնենական խաղաղությունը, վասնզի խաղաղություն չի կարելի ստեղծել,
 երբ չկա սեր, չկա համերաշխություն, չկա եղբայրություն:

Նա իմ քարեմաղթությունները կապում եմ Հիսուս մանկան ծննդյան հետ,
 որովհետև Փրկչի ծնունդը խորհրդանշան է լուսո, սիրո և խաղաղության գա-
 ղափարների: Ու լույսը նշանակում է ըմբռնել այն ճշմարտությունը, որը
 Փրկիչը բերավ աշխարհ:

Թո՛ղ Տերը լուսավորի ամբողջ մարդկության միտքը ֆրիստոնենական լույ-
 սով, վառի՝ ֆրիստոնենական սիրո կրակով և ներշնչի՝ ֆրիստոնենական խաղա-
 դության, եղբայրության, համերաշխության և համագործակցության ոգով,
 ինչպես միշտ, նույնպես և համաշխարհային խաղաղության ամրապնդման
 գործում:

ԵՐԿՐՈՐԳ ՀԱՐՑՈՒՄ.— 1953 թվականի շեմֆին, ի՞նչ եմ Ձերդ վեհափա-
 ռության քարեմաղթությունները վերածնված, ծաղկող ու բարգավաճող Հայաս-
 տանին, որին նվիրաբերել եմ Ձեր կյանքն ամբողջ:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Վերածնված Հայաստանին, Մեր կարծիքով, ամենից ավել-
 ի կարևոր է խաղաղությունը: Այդ մեզ ասում է պատմական անցյալը: Խա-
 ղաղության շրջաններում հայ կյանքը առաջադիմել, բարգավաճել է և՛ մշակու-
 րապես, և՛ տնտեսապես: Ճիշտ է, որ այդ խաղաղ շրջանները կարճ են եղել,
 բայց այնուամենայնիվ, մշակութապես և տնտեսապես բարգավաճ հայ կյան-
 քը տոկացել է բռնությունների, հալածանքների, տառապանքների ու զրկանք-
 ների:

Այդպես է և այժմ: Ներկայումս, բյուրական բռնության նիւսններից
 հողորւած հայ ժողովրդի հայրենադարձ զանգվածը, Հայաստանում, բնիկ
 ժողովրդի հետ միասին վայելում է խաղաղության պարգևները և մենք տես-
 նում ենք հրաշալի վերելք՝ ֆաշիստական հերոսների սրբազան արյամբ սր-
 բագործյալ և աշխատավոր զավակների ազնիվ ֆրոնտով արգավաճող հայ-
 րենի երկրի: Մեր կյանքը ո՛չ մեկ կերպով ետ չի մնում զարգացած ազգերի
 կյանքից: Այս հրաշալի առաջադիմությունը մենք պարտական ենք ներկայումս
 վայելած խաղաղության:

Այստեղ, ամենակարևոր դեր են խաղացել ուս մեծ ժողովրդի բարեկա-
 մությունն ու Խորհրդային Միության պետականությունը, որ աջակցել, ան-
 դույ հոգատարության առարկա է դարձրել մեր ժողովրդին, որպեսզի զարգա-
 նանք մշակութապես ու տնտեսապես:

Անտարակույս, մեծ դեր է խաղացել նաև հայ հարազատ պետականու-
 րյունը, որի իմաստուն ղեկավարության ներքո, ըստ ամենայնի բոլոր ասպա-
 րեզներում զարգանում են հայ ժողովրդի բնածին ձիրքերը: Բայց դուրս հետ
 միասին դեր է խաղացել ինքը՝ հայ ժողովուրդը:

Ուրախանում եմ տեսնելով հայ գիտնականներ, երաժշտագետներ, նկա-
 ռիչներ, ճարտարագետներ, վերջապես բարձրորակ գեղարվեստագետներ,
 որոնք ո՛չ միայն փայլում են մեր երկրում, այլև Մոսկվայում, աշխարհի այլ
 կենտրոններում: Նրանք տարվա կարճ ժամանակամիջոցում այսչափ ակն-
 բախ առաջադիմություն սովորական երևույթ չէ: Ահա՛ թե ինչո՞ւ հայ ժողո-
 վուրդը կարելի է կոչել հերոս ժողովուրդ, սփանչելագործ ժողովուրդ:

Հայ ժողովուրդը, որ իր ավերակների մոխրից նոր ծլեր տվեց և հասավ այսօրվա խոշոր մշակութային և տնտեսական վերելքի, մեծապես պարտական է ռուս ժողովրդի եղբայրական աջակցության և, ի խորոց սրտի, իրեն զգում է երախտապարտ՝ խորհրդային պետության և ռուս ժողովրդին:

Իմ անկեղծ բարեմաղթություններն են, որ Տերը անասան պանի խորհրդային պետությունը, որը ո՛չ միայն մեզ հանդես էր բերում, Միության 16 հանրապետությունների հանդես էր բերում, այլև ուրիշ ազգերի և ամբողջ մարդկության հանդես էր բերում է մարդասիրական զգացմունք և պայքարում է համաշխարհային խաղաղության ամրապնդման համար: Թո՛ղ հավետ անասան մեա խորհրդային պետությունը, որպեսզի շարունակի, ժողովուրդներն ամբողջ, աշխարհավեր պատերազմի մղմանը փրկելու իր սրբազան գործը:

Թո՛ղ Տերը անասան պանի, փոհակաճացնի և իմաստնացնի սիրո և գուրգուրանքի, ակնածանքի ու հիացմունքի սրբություն սրբոցը հանդիսացող խորհրդային փառապանծ Հայաստանի իշխանությունը, որպեսզի ապագային ևս անեն ու զարգանան մեր մշակույթը, գիտությունը, տեխնիկան, որովհետև այդ անի ու զարգացման շնորհիվ մենք կկարողանանք համայն մարդկության մշակույթի գանձարանի մեջ ունենալ մեր էլ մշակութային մասնաբաժինը:

ԵՐՐՈՐԴ ՀԱՐՑՈՒՄ.— Ես, արտասահմանից դեռևս նոր հայրենադարձ հայ, իրազեկ եմ լայն անսահմանորեն խորը պատկառանքին, որ տածում է Սփյուռքի յուրաքանչյուր հայր Զերդ Վեհափառության հանդես, որպես սիրագործ չայրիկի, ազգընտիր չայրապետի, Կրոնապետի և Ազգապետի: Արդյո՞ք կարելի է իմանալ, քե ի՞նչ են, նոր տարվա կապակցությամբ, Զերդ Վեհափառության բարեմաղթություններն ու պատգամը Սփյուռքի Զեր հարազատ պանդուխտ որդիներին:

ՊԱՏԱՆԱԿ.— Իմ աշխարհայացքով, իմ հայ ժողովրդի և այլ ազգերի պատմության ծանոթությունով, իմ անձնական փորձառությամբ համարում եմ, որ ամենամեծ բաղժը հայ ժողովրդի համար՝ ազգահավաքն է, տարտղնված հայ հատվածների դեպի հայրենի երկիր վերադարձը: Ա՛յս է իմ կտակը:

Սակայն, ո՞րն է այն երկիրը, որ կարելի է ի մի համախմբել, հավաքել հայ ազգի բեկորները — Կալիֆորնիա՞, Բրազիլիա՞, Մատակասկա՞ր...:

Այն հայրենի երկիրը, որտեղ կարող ենք հայ ժողովրդին հավաքել, դա մեր ներկա ծաղկող Սովետական Հայաստանն է:

Իմ ասածների հետևանք, ուրեմն, կլինի իմ բարեմաղթությունը: Սրտնոստիկ աղոթում եմ Հիսուս խանկան, որ եա իրացնի ու իրականացնի խաղաղությամբ հայ ժողովրդի հայրենադարձը, ազգահավաքը, որպեսզի մենք կարենայինք ապահովել մեր ֆիզիկական անձն ու մշակութային, տնտեսապես ու տեխնիկապես, ի մի բան, ամեն ինչով զարգացումն ու զորացումը, որովհետև դուրս մեջ է մարդկային կյանքի երջանկությունը. երջանկություն, որ ընդհանուր մարդկության ցանկությունն է ու խղճար:

Ինչ վերաբերում է Սփյուռքի հայության իմ պատգամին, կրկնում եմ այն, ինչ ասել եմ շարունակ:

«Հավատացյալ զավակներս,

«Ազնվաբար և բարեկենցաղ տոկացե՛ր ձեր առժամյա իջևաններում մինչ երջանիկ ու փրկարար օրը հայրենադարձի:

«Խնաստություն և ազնվություն ունեցե՛ր մնալ հավատարիմ ձեր Մայր Հայրենիքին, Հայրենի պետության և բնաշխարհի հայրենաքնակ հարազատ եղբայրներին, որոնք անձկանոք ձեր զալստյանն են սպասում:

«Հավատարիմ մնացե՛ր ձեր ազգային հայրենի հինավուրց եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որ ի տվեցյան և ի գիշերի իր ջերմեռանդ աղոթներն է վերառափում առ Ամենաբարին՝ առողջություն և երջանկություն պարգևելու մեզ:

«Ամենօրյա և Ս. Մենդյան ողջույն հայրական և երկնային օրհնություն հայրապետական Մեր բաւեպաշտ, հայրենասեր և ազնիվ զավակաց»:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՐՑՈՒՄ.— Միշտ ապավինելով Ձերդ վեհափառության հայրական ներդաժնության, խնդրում եմ ինձ արտոնել մի հարցում ևս անելու: Ձերդ վեհափառությունը, որ չափազանց պատվախնդիր է եղել իր հովվապետած Հայաստանյայց Ազգային Առաքելական Ս. եկեղեցու ավանդական վեհափառության, նվիրական գերիշխանության և սրբազան միասնականության մասին, կբարեհաճի՝ նշել, քե Հայոց եկեղեցին ի՞նչ վերաբերմունք ունի բույր եկեղեցիների և այլակրոնների նկատմամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Ես պարծենում եմ, որ Հայ եկեղեցու զավակ եմ, Վասնզի ի դեմս Հայ եկեղեցու, ես տեսնում եմ մի փոքր նմուշ Տիեզերական եկեղեցու, երբ բոլոր եկեղեցիները մի էին:

Ինչո՞ւ է տիեզերական Հայ եկեղեցին: Որովհետև նա պահպանել է Տիեզերական առաջին եկեղեցու դավանանքը, նորա կանոնները, նորա պաշտամունքը, ծեսերը: Որովհետև Հայ եկեղեցին ձգտել ու ձգտում է վսեմ բարոյական գաղափարներ մարմնացնել: Որովհետև Հայ եկեղեցին վարչականապես ունի դեմոկրատիկ բնույթ և ժողովրդական ոգի:

Հայ եկեղեցու ժողովրդական ոգին և դեմոկրատիկ բնույթը արտացոլվում են նորա բնարական սկզբունքի, ժողովրդական վարչածրի մեջ: Հայ ժողովրդի լայն մասնակցությունը բոլոր տեսակի ժողովներում և մարմիններում, մասնավոր ազգային-եկեղեցական ժողովում, որ միակ օրենսդիր մարմինն է Հայ եկեղեցու, մինչև իսկ դավանական հարցերում, անառարկելի փաստն է նորա դեմոկրատիկ բնույթի և ժողովրդական ոգու: Այսպիսի բնույթ և ոգի ունեցող Հայ եկեղեցին ես համարում եմ յուրատեսակ մի ծաղիկ աշխարհի բոլոր եկեղեցիների բուրաստանում, որի մեջ նա եղել է, կա և կմնա:

Հայ եկեղեցին, բոլոր մյուս եկեղեցիների և կրոնների նկատմամբ, ունի համբերատար և ներդաժնիտ վերաբերմունք: Ինքը վեհափառ է, անկախ է և այդպես էլ նախադրում է մյուս եկեղեցիներին: Միանգամայն փնելով հեռի եկեղեցական միությունից, նա պատրաստ է, բարոյական գաղափարների շուրջ, բոլոր մյուս եկեղեցիների և կրոնների հետ համագործակցության:

Շնչառելով այս նշմարությունները, մի անգամ ևս խրատում եմ.

«Հայ մա՛րդ, հավատարիմ մնա՛ր քո երանելի նախնյաց ավանդներին և բարձր ու անվար պահպանի՛ր ազգանվեր եկեղեցու վեհափառությունն ու գերիշխանությունը արտաքին քե ներքին ամեն ոտնձգությունից և զգույշ եղի՛ր գաղնագգեստ գայլերից, որոնք փորձում են առերևույթ շահաստացության սին խոստումներով գայրակղեցնել քո միտքը, խոռվել քո հոգին և ուստայնել քո խիղճը»:



Վերջացած է ունկնդրությունը: Երկյոտածությամբ նորից համբուրելով
Նորին Ս. Օծության Աջը, հրաժեշտ եմ առնում:

Դուրսը ձյունն իջնում է փաթիլ-փաթիլ. ցուրտ է մթնոլորտը, բայց իմ
սիրտը. իմ հոգին, իմ ամբողջ էությունը համակվել է մի անօրինակ ջերմու-
թյամբ և ուրախությամբ. ջերմություն, որի ակնադրյունն է Ամենայն Հայոց
Հայրապետի հայրագործի սիրտը. ուրախություն, որ Հայրենիքի ու հայ ժո-
ղովրդի օգտին անդույլ բրբռացող այդ սիրտը, 85 տարիների հսկա դեզի հա-
կառակ, պանել ու պանում է իր կայտառ երիտասարդությունը, առուգությունն
ու պայծառությունը: Այդ ջերմության և ուրախության ազդեցության ներքո ես,
պարկեշտասուն հայունիների նման սպիտակագգեստ ակասիաների տակ
փոված կաթնասպիտակ ձյունի վրա ֆայլելիս, մրմնջում եմ.

— Թո՛ղ մեր պաշտած Հիսուս մանուկը երկա՛ր, շա՛տ երկար կյանք
պարգևի Ձեզ, Վեհափառ Հա՛յր:

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

